

Տղաշին:

Հալած նիւթ ճերմակ	1 ունկի, 6 ցորեն
Անթիմոնի ապակի 1	43 ցորեն
Կասիոսեան ծիրանի	1 ցորեն:

Կամ թէ աւելի աղէկ.

Հալած նիւթ	6 ունկի
Երկըթի դքսիտ	36 ցորեն:

Յալինը:

Եկենէն դժուարը աս քարիս նը մանցընեն է: Տուողը նոյն տպագիւնին բաղադրութիւնն առաւ ու 36 ժամ կրակի մէջ ձգեց, ասանկով մէկ դեղնորակ բիւրեղ մը դարձաւ. ետքը ասիկայ ալ փշողական եղէգով՝ հալեցընելով՝ ճիշդ արեւելեան աղուոր յակինթ դարձաւ:

Միւս յալինը:

Հալած նիւթ	3 ունկի
Մանկանեղի դքսիտ	1 տրամ:

Ծաւագոյն բիւրեղ:

Հալած նիւթ	6 ունկի
Անթիմոնի ապակի	24 ցորեն
Քոպալթի դքսիտ	1½ ցորեն:

Կարկէն:

Հալած նիւթ	6 տրամ, 8 ցորեն
Անթիմոնի ապակի	3½ տրամ
Կասիոսեան ծիրանի	2 ցորեն
Մանկանեղի դքսիտ	2 ցորեն:

Թէպէտ արհեստով գոյնզգոյն քարեր շինելը շատ առաջ գնացած է հիմա, բայց հաւանական է որ երթալով աւելի պիտի ծաղկի ու կատարելագործուի. որովհետեւ տեսակ տեսակ մետաղներու դքսիտը այլեայլ չափով խառնելով՝ նոր նոր գոյներ կ'ելեն. ինչ պէս նիւթէլը բորակին հետ խառնուելով՝ անոր յակինթի կարմրութիւն մը կուտայ՝ այլեայլ աստիճանի պայծառութեամբ. նմանապէս փլաթինի հետ ալ մոխրագոյն կապոյտ գոյն մը կ'ունենայ: Ուրանը, և փոթասի քրո-

մուտը՝ մութ դեղին գոյն մը կ'աւելցնեն որ յախճապակի շինելու կը գործածուի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Տրեղա:

Տրեղաճաւ Սաքսոնիայի՝ Թադաւորութեանը մայրաքաղաքն է: Եւ պա գետը աս քաղքիս մէջէն կ'անցնի ու վրան 552 ոտք երկայնութիւն ու 16 կամար ունեցող կամուրջ մը ձգած է, որով քաղքին երկու կը տորները իրարու հետ կը միանան: Տրեղտա քաղաքը դրսի երկիրներու հետ շատ վաճառականութիւն չունի և քիչ ձեռագործ կը խաւրէ օտար քաղաքներ. բայց գրեթէ ուրիշ վաճառաչ քաղաքներուն կեդրոնն ու համբարանոցը կը սեպուի, և տարին շատ անգամ տօնավաճառ կ'ըլլայ հոն: Տրեղտայի մէջ շինուած ուսումնական, մեքենական ու երաժշտական դործիքները անուանի են. նմանապէս յախճապակի ու ապակեղէն գործուածքներն ու հայլիները. սանդ՝ թնդանօթ ու զանգակ ձուլելու գործարան մը ունի, և ամէն տարի աս քաղքիս մէջ կ'ըլլայ Սաքսոնիայի ձեռագործներուն հաւաքմունքը: Իւր նակիչներուն թիւն է 60 կամ 70,000


Սենայէն ետքը Վերմանիայի բնակիչներուն մէջ գիւղական զբօսանքներ սիրող Տրեղտացիք են. բայց կրնանք ըսել թէ հոնուրիշ քաղաք ալ չկայ որ բոլորտիքը այնպէս զուարճալի դեղեր ու զբօսանքի տեղեր գտնուին ինչպէս Տրեղտան. և թէպէտ Վալեան լեռանց հիւսիսային կողմը կ'ընայ, բայց օդը բարեխառն է. միայն

1 Գղ. Verre d'antimoine.

2 Գղ. Chalumeau.

1 Գղ. Chromate de potasse.

2 Սաքսոնիան Գերմանական դաշնակցութեան մէկ մասն է: 3 Հալին:



Տրեշտա :

Քաղքին հարաւային արեւելեան կողմը Նափուէնին պատերազմներէն ՚ի վեր աւերակ մնացած է : Բայսպէս աղուոր դիրք ունենալուն համար՝ գարնան Եւրոպայի ամէն կողմէն հոն տեղը կ'երթան : Բայ բնութեան զուարճալի տեսարաններէն զատ, քաղքին մէջն ալ տեսնելու տեղեր չեն պակսիր . ինչպէս են պատկերահանութեան գարանը՝ որուն մէջ երկու հազարի չափ պատկերք կայ՝ գերմանացի, գաղղիացի ու իտալացի նկարիչներէ քաշուած : Երևելի է նաև պղնձի վրայ փորագրուած պատկերներու հաւաքմունքը . ասոնցմէ մէկը 1466ին փորագրուած է, որ ամենէն հինը կըրնայ սեպուիլ : Բնուանի են նաև արձանաց, հնութեանց ու յախճապակէ գործուածքներու թանգարաններ : Տեսնելու բաներէն մէկն է նաև Կանաչ գմբէթ՝ ըսուած թանգարանը, որ Սաքսոնիացւոց մեծ պարծանքն է . ասիկայ ութը սենեակ է . մէջը ամէն տեսակ ոսկիէ, արծրթի, փղուկի, սաթի, գոհարէ ու մարգարտէ զարդերով ու բանուածքներով լեցուն, և ասոնցմէ շատը երևելի իշխաններու ու թագաւորներու ընծաներ են . կանաչ գմբէթ ըսուելուն պատճառը աս է որ գմբէթը ներսի կողմէն բոլոր կանաչներկած է, պատերն ալ կանաչ ու խատուտիկ մարմարիոնով պատած, ու տեղ տեղ խոշոր հայլիներով զարդարած են : Երևելի է նաև զինարանը, որուն մէջ միջին դարու զէնքեր շատ կան :

Տրեշտային փողոցները երկայն, շիտակ ու մաքուր են, շատն ալ ծառազարդ . տները աղէկ շինած են . տասնըութ եկեղեցի ունի, և ասոնց մէջ ամենէն աղուորը ուղղափառացն որ եկեղեցին է, որ բարձր զանգակատուն մ'ալ ունի : Երևելի են նաև սրբոյն Սոփիայի, Բատուածանայ ու սուրբ Խաչի եկեղեցիները . աս վերջինին զանգակատանը վրայէն բոլոր քաղա-

է . ասիկայ ութը սենեակ է . մէջը ամէն տեսակ ոսկիէ, արծրթի, փղուկի, սաթի, գոհարէ ու մարգարտէ զարդերով ու բանուածքներով լեցուն, և ասոնցմէ շատը երևելի իշխաններու ու թագաւորներու ընծաներ են . կանաչ գմբէթ ըսուելուն պատճառը աս է որ գմբէթը ներսի կողմէն բոլոր կանաչներկած է, պատերն ալ կանաչ ու խատուտիկ մարմարիոնով պատած, ու տեղ տեղ խոշոր հայլիներով զարդարած են : Երևելի է նաև զինարանը, որուն մէջ միջին դարու զէնքեր շատ կան :

քը հայրի պէս կը տեսնուի : Թագաւորական պալատներն ալ հոյակապ շինուածքներ են . ան պալատը՝ ուր որ հիմա կընստի Թագաւորը՝ ներսէն շատ ընդարձակ ու զարդարուն է , իսկ դրսի տեսքը ներսինն համեմատ չէ : Սէկալ երեւելի շէնքերն են Լագոստէոն ըստած պալատը , Լաքայազանց պալատը , Յվինկէր ըստած պալատը , նաւարանը , դիւանատունը , և մեծ Թէատրոնը : Սանաւոր մարդկանց պալատներուն մէջ երեւելիներն են Շէնպուրկ , Ռայս , Վարլովիչ , Վուրլանտ , Ռիշ , Լոս , Վոդէլ , Վալվից ու Սարքովինի ըստած ցեղերուն պալատները : Սարքովինի պալատը շատ անուանի է իրեն զարդարանքներուն՝ պատկերներուն ու պարտէզներուն համար : Տրեզտային մէջ 78 հատի չափ ուսմանց և գիտութեց ճեմարաններ ու դպրոցներ կան :

Տրեզտայի մօտ եղած զուարճալի գեղերն են Դքուից , Վրէյշա , Տոնհա , Շլոթվիցեր , Փլաւիշէ Կրունտ , Թարանթ , Օէյֆէրստորֆ , Փիլնից ու Շանտալ :

Տրեզտայէն ինչուան Լիփսիա երկրէն ճանապարհ մը կայ , որ ետեւէն ինչուան Պերլին ու Վէննա ալ հասցընելու :

Կապուտակ այր :

ԲԱՌԻԹԵԱՆ հրաշալի տեսարաններէն մէկն է Կապուտակ այր՝ ըստածը , որ յիրաւի Լտելպերկի այրին պէս մեծ ու ահաւոր չէ , բայց նոյնպէս հռչակաւոր է իրեն մէկ քանի եզակի յատկութիւններուն համար :

Լս զարմանալի այրը՝ Կափովի մօտ Լնաքափրի ըստած կղզիին մէջն է , որ երկար ատեն անյայտ մնացած էր ու աս վերջի ատեններս դիպուածով գտնուեցաւ : Լըկու անգղիացի ճա-

նապարհորդներ ծովը մտած ըլլալով լողալու համար՝ մէկ մղոնի չափ Վափրի գեղէն կը հեռանան , և անոնցմէ մէկը ծակ մը կը տեսնէ , մէջը կաս կապոյտ . կը մօտենայ ծակին բերանը որ աղէկ մը նայի , մէյմըն ալ նոյն միջոցին ալիք մը կուգայ կը զարնէ ու զինքը ծակէն ներս կը ձգէ : Տոն կէս ժամ կենալէն վերջը դուրս կ'ելլէ մարդը՝ ապշած ու զմայլած ան այրին գեղեցկութեանը վրայ . վերջը քաղաքը դառնալով կը պատմէ իրեն գլխէն անցածը , որով ուրիշներն ալ կը սկսին երթալ ան այրը տեսնելու :

Սովորական ու ապահով մուտքը մէկ է՝ բարձրութիւնը չորս հինգ ոտնաչափ . իսկ լայնութիւնը այնչափ է որ հազիւ Թէ պզտի նաւակ մը կրնայ մտնել . աս ծակէն ներս չկրնար մարդ մտնել՝ ինչուան որ մեծ ալիք մը չզարնէ այրին բերանը , ու ջուրը բարձրանալով ծակէն ներս չվազէ , որով ան վազուածքին ատենը նաւակն ալ ներս կը մտնէ : Ստենէն վերջն ալ նեղ ջրանցք մը կայ որ անկէ երթալու է քառորդի մը չափ , որպէս զի բուն այրը տեսնուի :

Լայրին ընդարձակութիւնը չորս մղոնի չափ է . ջուրը խաղաղ ու Թափանցիկ . ուր որ նայիս՝ կապուտ գունէն զատ ուրիշ գոյն չես տեսներ . և աս գոյնս անանկ կենդանի է որ կարծես Թէ կիտուածով բանած է՝ գոյնը աւելի դուրս ցատքեցընելու համար : Ջրին խորութիւնը 15^{էն} ինչուան 20 ոտք է , և անանկ պայծառ ու մաքուր է որ կարծես Թէ ամենեւին խորութիւն չունի . Թէ որ մէջը քարի կտոր մը ձգես , ջրին դաչելու ատենը աղուոր լոյս մը կը հանէ , և անանկ հանդարտ վար կ'իջնայ որ ինչուան տակը հասնելու համար 15 վայրկեան հարկաւոր է :

Լայրին վրայի կողմը սաստիկ բարձր է և ճեղքուած ժայռի մը կը նմանի , վրայէն ալ գեղեցիկ քարաց-